

ԱՌԱՋ Ա ԴՐԱՆՔՆԵՐ

Առաջադրանքների լուծման համար տրվում է **75** րոպե **11-12-րդ դասարաններ**

- Յուրաքանչյուր առաջադրանքի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը:
- Չլուծված առաջադրանքի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում:
- Մրցույթի մասնակիցը կարող է վաստակել առավելագույնը 120 միավոր:
- Մրցույթի ավարտին առաջադրանքների թերթիկը մնում է մասնակցի մոտ:
- Մրցույթի մասնակիցներին ներկայացվող գլխավոր պահանջը առաջադրանքներն ինքնուրույն և ազնվորեն կատարելն է:

3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. Պատասխանի տարբերակներից չորսը «բարեկամներ» են, իսկ մեկը նրանց հյուր է եկել: Ո՞րն է հյուրը:

- Ա. փղձկալ Բ. փոթկալ Գ. խոկալ Դ. քթկալ Ե. տոկալ

2. Ո՞ր դարձվածքն է պատկերված նկարում՝

- Ա. հոնքը շինելու տեղ աչքն էլ հանել
 Բ. արջը յոթ երգ գիտի, յոթն էլ տանձի մասին
 Գ. արջը չսպանած՝ մորթին կիսել
 Դ. արջ պարեցնել
 Ե. աչքով տալ



3. Եթե բառերը բաժանվեն բանակների, ապա ո՞ր բառագույգերի բառերը կհայտնվեն միևնույն բանակում:

1. բիրտ - քնքուշ, 2. երկչոտ - համարձակ, 3. գթալ - կարեկցել,
 4. խթանել-հրահրել, 5. թավ - նոսր


- Ա. 1, 3 Բ. 4, 5 Գ. 3, 4 Դ. 3, 5 Ե. 2, 4

4. Բառերից մեկը չի ենթարկվում մի ընդհանուր հետաքրքիր օրինաչափության: Ո՞ր բառն է դա:

- Ա. գազաթ Բ. կանթեղ Գ. հատույթ Դ. սավան Ե. կառույց

5. Ո՞ր տարբերակի բառերը լրացնելով քառակուսու մեջ՝ տողերով և սյուներով կկարդանք բառեր:

- Ա. աղտ, տղա, ուղտ Բ. յուղ, սեխ, սոխ Գ. տղա, այտ, յուղ
 Դ. ուղտ, յուղ, տղա Ե. տաղ, խոտ, տղա



6. «Սոխ չես կերել, սիրտդ ինչո՞ւ է մրմռում» առածը նշանակում է.

- Ա. Սոխ ուտողի սիրտը կմրմռա:
 Բ. Եթե սոխ չես կարողանում ուտել, սրտիդ մրմռուք չի անցնի:
 Գ. Եթե որևէ բան քեզ չի վերաբերում, ինչո՞ւ ես անհանգստանում:
 Դ. Եթե որևէ բան անհանգստացնում է քեզ, սոխ կեր:
 Ե. Եթե սոխ ես կերել, մի՛ անհանգստացիր, կարևորը՝ սրտումդ մրմռու չլինի:

7. Ո՞ր տարբերակում սխալ կա:

- Ա. թռչել - թռնող Բ. հագնել - հագնող Գ. վազել - վազող
 Դ. մոտենալ - մոտեցող Ե. զարգանալ - զարգացող

8. *Կենդանի, խելք, հովազ, ծավալ, փաթիլ, շարք, թողարկում* բառերից մեկը չի ենթարկվում մի ընդհանուր հետաքրքիր օրինաչափության: Ո՞ր բառն է դա:

- Ա. կենդանի Բ. թողարկում Գ. շարք Դ. փաթիլ Ե. հովազ

9. Ո՞ր բառի հոմանիշը չես գտնի *ԴԱՆՈՒԿԱՎԱՋԹ* բառում:

- Ա. վախ Բ. խինդ Գ. որթ Դ. շինանյութ Ե. կավահող

10. Ո՞րն է հետևյալ ժողովրդական հանելուկի պատասխանը.

- Հազար դուռ,
 Հազար լուսամուտ.
 Հազար անցք,
 Հազար հանգույց,
 Հազարը կրնկնի,
 Մեկը չի էլնի:*

- Ա. երդիկ Բ. երկինք Գ. օվկիանոս Դ. բազմաբնակարան շենք Ե. ուտկան

4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11. Մի մասով արքա կնշանակեմ կամ էլ օգուտ, Հաջորդ մի տառով ես այբուբենի տառն եմ 22-րդ, Իսկ վերջին 2 տառով հարց կտամ՝ ուղղությունն իմանամ:

Ո՞ր գրողի կեղծանունն է ծածկագրված:

- Ա. Ա. Յարճանյան Բ. Շ. Քերեսթեճյան Գ. Դ. Չպուգքյարյան
 Դ. Մ. Մեծատուրյան Ե. Օ. Կարապետյան

12. Ո՞ր բառում է հնարամտորեն «թաքնվել» հարյուր տարին:

- Ա. բարձրադիր Բ. բարձրակարգ Գ. բարձրամիտ Դ. վերամբարձ Ե. լուսատարի

13. Ո՞ր նախադասությունն է գերծ մնացել մակաբույծ բառերից:

- Ա. Խնձորը դա Շողիկի սիրած միրգն է: Բ. Կինը սուրճը խմեց մինչև ցմրուր:
 Գ. Խաչատուր Աբովյանը հանդիսանում է հայ նոր գրականության հիմնադիրը:
 Դ. Արեգը լավ է նվագում ջութակի վրա: Ե. Այս մարդն ինձ ծանոթ է թվում:

14. Աջ կողմում բերված է տառային ծածկագիր, որում յուրաքանչյուր տառին համապատասխանում է մեկ թվանշան: Նույն տառերին համապատասխանում են նույն թվանշանները: Բերված տարբերակներից ո՞րն է համապատասխանում այդ տառային ծածկագրին:

Ա. 30179	Բ. 40179	Գ. 20179	Դ. 20176	Ե. 20175
+	+	+	+	+
<u>30179</u>	<u>40179</u>	<u>20179</u>	<u>20176</u>	<u>20175</u>
60358	80358	40358	40352	40350

15. «Կարթից բերանն այրվել է, մածուներ փչելով է ուտում» առածը նշանակում է:

- Ա. Տաք կաթը կարելի է մերել, մածուն սարքել, նոր ուտել:
- Բ. Կաթ ուտող կատուն մածուն էլ կուտի:
- Գ. Զգույշ աղվեսը երկու ոտքով է թակարդն ընկնում:
- Դ. Շատ զգուշավոր է դարձել, աչքը վախեցել է:
- Ե. Ով տաք կաթ չի խմել, սառը մածունի համը չի իմանա:

16. Գլխի ընկնել, գլխի վրա տեղ ունենալ, գլխի ճարը տեսնել, գլխի մեջ մեխել, գլխի շուրջը երգել, գլխի գցել, գլխի հոգսը քաշել արտահայտություններից ո՞րն է «ավելորդ»:

- Ա. գլխի գցել
- Բ. գլխի շուրջը երգել
- Գ. գլխի հոգսը քաշել
- Դ. գլխի ճարը տեսնել
- Ե. գլխի ընկնել

17. Ո՞ր տառը ՈՐ բառին սկզբից և վերջից ավելացնելիս չենք ստանա սարդ, ցնցոտի, ջերմ, կարպետ բառերից մեկի հոմանիշը կամ համարժեքը:

- Ա. ձ
- Բ. գ
- Գ. ք
- Դ. մ
- Ե. ք

18. Ես հայ եմ. հին, ինչպես յառն այս Արարատյան, Հազար տեղ է բախվել իմ վահանին ահեղ, Փշրել եմ սակայն ամեն սուր ու պատյան Եվ լեռներին նման գրուխս վե՛ր պահել:

Պատասխանի տարբերակներից ո՞րն իր հոմանիշը չունի Գևորգ Էմինի բանաստեղծության վերոբերյալ քառատողում:

- Ա. սնար
- Բ. նիզակ
- Գ. գորեղ
- Դ. ասպար
- Ե. սուսեր

19. Ո՞ր բառն է գաղտնագրված:

3³ 4³ 2¹ 3⁴ 9² 8¹ 2³

- Ա. երեսուն
- Բ. երեքնուկ
- Գ. ննջարան
- Դ. կենգուրու
- Ե. վարսանդ

20. Հոտնկայս, հանպատրաստից, հանուն, հիրավի, հանգույց բառերից չորսը ձևավորվել են ինչ-որ սկզբունքով: Ո՞ր բառն է, որ կազմվել է ոչ այդ սկզբունքով:

- Ա. հոտնկայս
- Բ. հանպատրաստից
- Գ. հանուն
- Դ. հիրավի
- Ե. հանգույց

5 միավոր գնահատվող առաջադրանքներ

21. Ռուսներն այդ իրավիճակը նկարագրում են հետևյալ արտահայտությամբ՝ «երբ սարի գլխին խեցգետինը սուլի», իսկ ֆրանսիացիները՝ «երբ հավն ատամներ հանի»: Բերված արտահայտություններից որո՞վ (որոնց՞) կարող ենք նկարագրել այդ իրավիճակը:

- 1. Էջ, մի՛ սատկիր, գարուն կգա:
- 2. Երեկ՝ մեկ, այսօր՝ երկու:
- 3. Ցամաքում ձուկ բռնել:
- 4. Ձիու ականջը մտած:
- 5. Երբ կրիան ծառը բարձրանա:
- 6. Երբ որ երբը գա:

- Ա. 1
- Բ. 1, 5 և 6
- Գ. 2, 3 և 4
- Դ. 5 և 6
- Ե. 1 և 5

22. ԿԵՐԱՇԱՍԸ ՄԻ ԶՐԱՍՈՒԿ ՏԵՍԱԿ ՏԵԳԻ ՎՐԱ: ԶՐԱՄԿԻ ԱՍՐԱԿԸ ԸՍՔԵԼ ԷՐ:

Այս նախադասությունների որոշ բառերում տառերն իրենց տեղերը փոխել են: Ի՞նչ նախադասություններ կստացվեն, երբ տառերը վերադառնան իրենց տեղերը:

- Ա. Կերաշատ վայրում ջրամկներ շատ կան: Ջրամկան ատամը ճաքել էր:
- Բ. Ջրամուկը տեսավ մի կերատաշտ գետի վրա: Կերատաշտի հատակը ճաքել էր:
- Գ. Աշակերտը մի կամուրջ տեսավ գետի վրա: Կամրջի կամարը ճաքել էր:

2. Շերտակերը ջրամկան մի տեղ տեսավ: Ջրամկան շրթունքը ճաքեց:

Ե. Աշակերտը ջրամկան հետ մտավ գետը: Գետի կամուրջը ճաքել էր:

23. Զգան, թզենի, վարգ, լորուտ, նաղիր բառերը գրաշրջվում են (նույն տառերով կազմվում է այլ բառ): Ո՞ր բառի գրաշրջումն է նշանակում երկնակամարի կետ:

- Ա. ձգան
- Բ. թզենի
- Գ. վարգ
- Դ. նաղիր
- Ե. լորուտ

24. Բերված բառերից չորսին հատուկ է շատ հետաքրքիր օրինաչափություն: Ո՞ր բառն այդ օրինաչափությանը չի ենթարկվում:

- Ա. սրբավայր
- Բ. բազմագույն
- Գ. ծաղկակապ
- Դ. դարագլուխ
- Ե. նրբաշուք

25. Ականջ՞դ, աման՞դյա, ամեն՞դյա, ան՞գնական, ան՞թևան, ապ՞րինի, արծաթագ՞ծ, բաց՞թյա, բն՞դրան, գիշերուզ՞դ, գիշեր՞թիկ, հանապագ՞դդ, հանապագ՞դյա, հ՞տնկայս, մեղմ՞դոր, մեղմ՞րեն, մի՞րինակ, նախ՞րոք, ջր՞րենեք, վաղ՞դդայն, վաղ՞րոք, տասն՞դյակ, տար՞դոշել, տափ՞դակ, օրըստ՞րե, օր՞րել բառերը բաժանվել են երկու բանակի ըստ *-ի տակ թաքնված տառի: Տարբերակներում բերված ո՞ր պնդումն է ճիշտ:

- Ա. Բանակներում բառերի թվերը հավասար են:
- Բ. Բանակներից մեկում բառերի թիվը մյուսի բառերի թվից մեծ է իննով:
- Գ. Բանակներից մեկում բառերի թիվը մյուսի բառերի թվից մեծ է տասով:
- Դ. Բանակներից մեկում բառերի թիվը մյուսի բառերի թվից փոքր է տասնմեկով:
- Ե. Բանակներից մեկում բառերի թիվը մյուսի բառերի թվից փոքր է տասներկուով:

26. Ո՞րն է «խառնագրված» սիյուռքահայ գրողը:

- Ա. հիրամա
- Բ. պզրահո
- Գ. քեստամե
- Դ. ցաչներ
- Ե. դեհմասուս

27. Ի՞նչ է գրված նկարելուկով:



- Ա. Վերջում թերթում տպվեց հերքում:
- Բ. Ջիվանը թուրքալի վանդակը պատից կախեց:
- Գ. Վերջին թերթում տպագրվեց քահանայի խոսքը:
- Դ. Վաճառախանությունը տապի պատճառով վեց ժամ փակ էր:
- Ե. Ջիզիթը տապալեց ձիու վեց քուռակ:

28. Ի՞նչ կրկնվող ձայնավոր պետք է դնել ԲԲԲԲ տառերի արանքում, որ այն դառնա հավի ձագ փախցնող թռչնին քշելու բացականչություն:

- Ա. ա
- Բ. ե
- Գ. ու
- Դ. ի
- Ե. ը

29. Վաչագանն ունի տասներկու գնդիկ, որոնց վրա գրված է մեկական տառ: Այդ տառերն են՝ ն, ք, է, գ, ա, ն, ք, ա, ք, գ, ու, խ: Վաչագանը քանի՞ գնդիկ պետք է դնի կողք կողքի, որ ստանա հնարավոր ամենաերկար բառը:

- Ա. 8
- Բ. 9
- Գ. 10
- Դ. 11
- Ե. 12

30. Պատասխանի տարբերակներում տրված տառերից ո՞րը տեղադրելով մեղվի փոխարեն՝ հնարավոր է կարդալ 10-տառանի մի բառ (տե՛ս նկարը): Բառը կարելի է կարդալ շարժվելով միայն վերևից ներքև և ձախից աջ ուղղություններով:

- Ա. Ա
- Բ. Կ
- Գ. Ն
- Դ. Ը
- Ե. Ո

Ա	Հ	Ա	Վ	Ե	Ը	Կ
Կ	Ա	Յ	Տ	Ա	Ը	Ա
Ա	Մ	Ը	Ը	Ա	Կ	Ը
Ն	Բ	Ե	Ն	Կ	Ա	Հ
Ջ	ՈՒ	Ն	Ա	Տ	Ը	Ե
Օ	Յ	Ի	Ս	Ե	Ա	Տ
Ղ	Ը	Ք	ՈՒ	Ը	Ս	Ի